


ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ

ԿԱՆԻՍԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք ետ
չեն տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ . ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

— Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ. —

Ե. ՏԱՐԻ

— ԿԱՐՏ. 17 ՇԱՐԱԹ 1901 —

ԹԻԻ 204

ԿԱՐԵՒՈՐ

Վերջին անգամ ըլլալով հրապարակաւ ալ
կը խնդրենք մեր կարգ մը բաժանորդներէն որ
այլ եւս խիղճ ընեն ու փութան պարտքերնին
վճարել:

Գ Ե Ղ Ո Ւ Ն Ի

Վենետիկի Միթիթարեան Հարց Պատ. Միա-
բանութիւնը այս անգամ ալ կուտայ մեզ ԳԵ-
ՂՈՒՆԻ անունով պրակ մը, որ ՈՐԲՈՒՆԻ և ուրիշ
նմանօրինակ ճաշակաւոր հրատարակութեանց
պէս կուգայ գեղադարձել մեր թանգարանները:
Սոյն պրակին մէջ կը տեսնուին գունաւոր և
գեղատիպ պատկերներ ու շահեկան յօդուածներ:
Շքեղին ու ճաշակաւորին սիրահարը ունե-
նալու է սոյն պրակը:

Կը ծախուի 2, 50 ֆրանք. դիմել ի Վենե-
տիկ Ս. Ղաղարու վանքը, եւ կամ ի Պուլկարիա
Ա. Զարպհանէլեան գրատունը, Վառնա:

ԱԶԳԱՅԻՆ

Փ. Պուլտէն Մարտ 11 թուականաւ մեզ կը
գրեն:

«Երէկ, չաբաթ, Այցելու Հովիւը փնտռուե-
ցաւ տեղւոյ Բրէֆէին կողմէ. որովհետեւ Սօֆիա-
յի մէջ մի քանի խռովարարներ աղերսագրով

մը կը բողոքեն կառավարութեան թէ թաղակա-
նական նոր ընտրութիւն կուզեն ու ասկէ վերջ
թաղային ընտրութիւնք այլեւայլ ու պաշտօնական
մարմիններ կառավարութեան միջոցաւ ըլլան:

Արտաքին գործոց նախարարը թէլէֆօնով
կը հրամայէ տեղւոյ Բրէֆէին որ Այցելու Հո-
վիւին երթալով իմացնէ այս ամենը ու անոր
կարծիքը առնելով տեղեկագրէ իրեն:

Այցելու Հովիւին պատասխանը «ա կըլլայ:

«Առ այժմ չեմ կրնար Սօֆիա երթալ քա-
նի որ հոս ալ ընտրութեան ձեռնարկած եմ:
Զատիկէն վերջը կարող եմ Սօֆիա ըլլալ. գալով
«Հրաման ունի՞ք որ կառավարական հսկողու-
թեամբ ընտրութիւն կատարենք» հարցումին, կը
պատասխանեմ թէ Տ. Նախարարը ազատ է կա-
տարելու, թէ և մեր օրէնքը չը ներեր. ու այդ
պարագային ես պատասխանատու չեմ»:

* * *

Անցեալ շաբաթ (6 մարտ) տեղացի աղագ-
յիներէն 70ամեայ այրի կին մը մեռաւ առանց
վերջին ճաշակն առնելու:

Բարեչնորհ տէրպապանիս առարկեր է թէ՛
հիւանդ կնկան լեզուն ծանրացած ըլլալուն հա-
մար չէ կրցած վերջին «մեղայն» որոշ կերպով
լսել և որով զրկած է յիշեալը Ս. Հաղորդու-
թեան խորհուրդէն:

Արդ, իբր հարազատ շաւակ Հայաստանեայց
Ս. եկեղեցւոյ, կը փափաքեմ գիտնալ ու կը հար-
ցընեմ մեր տէրպապին թէ:

Ա. Ինչ տնօրինած է Հայաստանեայց Ս. Ե-

նալով ազգի փրկութիւնը, որուն համար ամեն ջանք խնայելու չենք եւ մեր ունեցածն ու չունեցածը տալու ենք յեղափոխական գործիչներու որ ԱՊՐԻՆ եւ գործեն: Վերջապէս ժողովուրդը իր ստակը պէտք է լեցնէ միմիայն մեր կուսակցութեան գանձարանը, (ԲՈԺ.—Վէստեւամ: Ո՞ր մէկերնուդ պիտի օգտեցնէ ժողովուրդը.) եւ եթէ աղօթել ուզէ, փոխանակ եկեղեցիի՝ դիմէ Ազատականաց սրճարանը ուր ամեն օր հսկումներ կը կատարուին մեր ձեռքով Հայաստանի փրկութեան համար:

Աւելորդ է ըսել թէ Պ. Յեղափոխականի ճառը հաւանութեան հեքերով ընդունուեցաւ եւ որոշուեցաւ:

1. Ապրիլու միջոցներ եւ նիւթական վիճակ մը ապահովել մեր հերոս յեղափոխականին: 2. Դրօշակ մը շինել, որուն վրայ Արմենո-Նաչարո-Հնչակ կուսակցութիւնները գրկախառնուած երեւին: 3. Բանւոր դասակարգին հրամայել որ իրենց գոմիտէ պաշի 1—2 ջաւով աղաներուն զլխահարկ վճարեն, հոկառակ պարագային իրենց հացէն զրկուելու սպառնալիքով: 4. Ստանայ չկեցած եւ առաւ—փախաւութեան չսեղմուող տեղեր եկեղեցի եւ. չյաճախել եւ գացողներն ալ բըռնադրել ու լրտեսի տեղ դնել: 5. Վերոգրեալ օրէնքները խստիւ գործադրել ու ի հարկին պատիժներ տնօրինել զանցառուներուն:

Վերոգրեալ որոշումները առ այժմ գործադրելի են բանի մը սրճարաններու մէջ, մինչ ցնոր տնօրինութիւն կամ ցտեսութիւն Պ. ԲՈԺԻԿԻ շաշոյ մարակին:

10 Մարտ 1901 Պուրկազ

ՄՈՒԸԿ

ԹԱՏԵՐԱԿԱՆ

Մէկ երկու անախորժ տեսարաններու ներկայ գտնուեցանք դարձեալ կիրակի գիշեր Սանդրալի մէջ, ուր Բ. անգամ պիտի ներկայացուէր «Վառպուրականի Հերոսները»:

Ժամը 8 էր երբ Սանդրալէն ներս մտանք ու առաջնորդուեցանք թատերասրահը որ խոր մութի մէջ էր, անանկ որ զիրար տեսնել անկարելի էր: Երբ ասոր պատճառը հարցուցինք, պատասխանեցին թէ «Պարոն վարձակալը սրահին վարձքը կանխիկ չառած չուզեր լամպաները վառել»: Հանդիսականներէ Տիար Մ. Զ. տեսնելով որ ամեն կողմէ եղած իրաւացի դիտողութիւնները ազդեցութիւն չեն ընել յամառութեան առջեւ, յայտարարեց որ ինքը կ'երաշխաւորեր

երկրորդ արարուածին դրամը վճարելու, բայց վարձակալը անդրդուելի մնաց իր որոշման վերայ եւ Տիար Մ. Զ. անմիջապէս վճարելով 35 ֆրանքը սկանսալի մը առաջքն առաւ ու հանդիսականները մութէն լոյսը հանեց:

Թէ ինչու Պ. վարձակալը այնչափ կը պնդէր կանխիկ գանձելու համար իր դրամը.

—Վախնալով որ խումբը նոյն 35 ֆրանքէն իրաւամբ զեղչ մը պիտի ընել, որովհետեւ Պ. վարձակալը հակառակ իր ըրած պայմանին, նոյն գիշերը թատրոնը առանց նուագարանի ձգած էր:

Սոյն խառնաշփոթութեան մէջ լսեցինք որ երկու դերասաններ ալ առանց իրենց վարձքը կանխաւ գանձելու չեն յօժարիր բեմը ելնել:

Այս անգամ ալ հանդիսականներէն Տիար Մ. Ե. իմացուց այն երկու պարոններուն որ ժողովուրդը որ վճարած է, ներկայացումը կը պահանջէ, դերասաններու առնելիք տալիքին չը խառնուիր, չը տուժեր ու չը թոյլատրեր որ քրօսկրամէն պակաս բան մը ըլլայ. այդ պարոնները կրնան յաշորդ օրը պէտք եղած տեղը դիմելով իրենց իրաւունքը պահանջել, հակառակ պարագային, ժողովուրդը զայրացնելով սկանսալի մը տեղի տուողները ըստ օրինի խտրել կը պատժուին:

Ասոր վրայ նոյն երկու պարոնները իրենց ստունձնած դերերնին կատարեցին:

Վերջապէս ցաւ ի սիրտ ստիպուած ենք խոստովանիլ թէ թատերական ներկայ ձեռնային սէզոնը այնչափ դժացուցիչ չեղաւ Վառնայի թատերասէր հասարակութեան համար, մերթ Պ. վարձակալին ու մերթ դերասանական տարօրինակ արարքներու շնորհիւ:

ԹԻԻ 25 ԱԹՈՌ

ՓՈԲՐ ԹՂԹԱՏԱՐ

Արդարասէր խումբ. Պուրկազ—Չարիպրոտ.— Ղրկած յօդուածնիդ հրատարակելու համար ձեր մէկ երկուքին ստորագրութիւնը անհրաժեշտաբար մեր քով գտնուելու է:

Պաղտասար Յովհաննէսեան Վառնա.— Ձեր դատարան գործին համար զրկած գրութիւնը չենք հրատարակել:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Աղէքսանդրիա 1 | 14 Մարտ 1900

Փետրվար 26 | 11 երկուշաբթի գիշեր տեղի ունեցաւ ի նպաստ Աղէքսանդրիոյ Աղքատախնամ բարեգործական ընկերութեան ներկայացումը, Պողոս փաշա Նուպարի հովանաւորութեան տակ, ՁիձիՆԻԱ անուն թատրոնին մէջ: Այս հիանալի թատրոնը, որ Աղէքսանդրիայի ամենէն նշանաւորն է, չորս յարկէ կը բաղկանայ: Ունի ահագին շանա մը զարդարուած ելեքսորական լոյսերով, հարուստ և թանկագին վարդոյրներով, որոնց ամէն մէկը 100 ոսկիէն աւելի կարծէ: ճոխ զգեստներ և կալսո՞ք, վերջապէս ամէն ինչ կատարեալ: Թատրոնին երեք յարկերը լոճա են. իսկ Դ.ը կալըրի որ 500-էն աւելի մարդ կաննէ:

Լոճաները, որ զարդարուած են թաւշեայ թիկնաթուռներով, կէս կլորի վրայ, ամէն մէկ կարգը 22 լոճա, Յական ալ շանային երկու եզերքը, որոնք ամենէն սուղ են. ընդամէնը 74 հատ, իսկ վարի սրահը 246 աթոռ կը պարունակէ: Ներկայացուած խաղը տաւ մը կամ ողբերգութիւն մը չէր, այլ Լօնէն-Կոնէն ըստած օրէնան, գաղղիներէն լեզուով, 50 հոգիէ բաղկացեալ նուագաժողաց խումբ մը առաջնորդութեամբ Ալէքսանդր Բօմէի, որ տեղւոյս էն առաջին վարպետն է, անուշ և հեշտօրօր եղանակներով կը ներդաշնակէին բեմին հերոսներուն հետ: 41 գերասանուհիք ճերմակներու մէջ, թեւերին մերկ և հերարճակ բեմին վրայ կելլէին կարգաւ կը կանգնին, նոյնպէս 50-էն աւելի գերասանք հին ժամանակի ծանրագին հագուստով կը ներկայանան: Աղջիկներուն մէջ ամենէն գեղեցիկը, գեղին ոսկեգոյն մազերով, որ թագաւորին կոմ լաւ ևս է ըսել նոյն գիշերուան հերոսին տիրուհին: Հին ըլլալու բաղդը ունեցած էր, իր պալատին պալտօնը ելած միջոցին, ելեքսորական լոյսը ուղղակի վրան զարնելուն, հուրիններու և զգլխի տեսարաններու էն հմայիչ մէկ պատկերը կը ներկայացնէր: Հանգիստականներէն մեծ մասը օտարազգի, հարուստներ էին. ինչպէս Ընդհ. զօրապետը, գեապաններ, հիւպատոսներ և պէյեր:

Տեղւոյս թատրոնին մէջ նոր բան մըն ալ տեսայ որ զիս զարմացուց. որովհետեւ առաջին անգամն էր որ կը տեսնէի, ուստի մի խնդաք իմ վրաս: Երբ լոճաններուն մէջ բազմած փափկասուն տիկիները և օրիորդները տաքէն սկսան անհանգիստ ըլլալ, վրանոցնին հանեցին ու տէքօլթէ եղան, կռնակներն ու կուրծքերնին փա-

ռաւոր կերպով բաց, թեւերնին նոյնպէս: Եթէ Պողոս Առաքեալը ներկայ գտնուէր, որուն համար կըսեն թէ ներքինի էր (?), անպատճառ խելքը կը թռցնէր:

Սոյն ներկայացման համար 150 անգլիական ոսկիէ աւելի ծախք եղած է. իսկ զուտ հասուցին է 350 անգլիական ոսկի:

ՍԵՀԱՐԱ

ԶԱՆԱԶԱՆՔ

Լեզուներ

Բոլոր վեհապետները քանի մը լեզուներ կը խօսին:

Ձարը կը խօսի Պրանսերէն, Գերմաներէն և ինչ ինչ սլաւ գաւառաբարբառներ:

Գերմանիոյ Կիյօմ Բ. Կայսրը կը խօսի Անգլիերէն, զոր իր մօրմէն Ֆրէտէրիկ Կայսրուհիէն սորված է, Պրանսերէն, Լատիներէն, Լեհերէն և մանաւանդ Ռուսերէն:

Պրանց-ժօղէֆ Աւստրիոյ Կայսրը բացի Գերմաներէնէն և Պրանսերէնէն կը խօսի Հունգարերէն, Չեխերէն, Լեհերէն, Սերպերէն, Խոււթերէն, Դալմացերէն, Ռումաներէն, Իտալերէն և նոյն իսկ քիչ մ'ալ Եբրայեցերէն (հին հեթանոսերէն), (ամենէն աւելի (11) լեզու գիտցողն է Աւստրիոյ Կայսրը):

Իտալիոյ արդի թագաւորը կը խօսի Գերմաներէն և Պրանսերէն, բայց իր լեզուն՝ Իտալերէնը հիմնովին գիտէ:

Անգլիոյ Թագուհին շատ գեղեցիկ կերպով կը խօսէր Գերմաներէնը և բաւական սահուն՝ Լատիներէնը:

Պուլկարիոյ Ֆէրդինանտ իշխանը կը խօսի բացի Պրանսերէնէն, Անգլիերէն, Գերմաներէն, Ռուսերէն և գրեթէ ուսումական բոլոր գաւառաբարբառները:

Պ. Լուպէ, Պրանսացի նախագահը հիանալի կերպով Պրանսերէն կը խօսի:

Ռուլլինֆ, կամ Ռուսական անձեռոց (փէշկեր). — Ռուսիոյ մէջ, երբ երիտասարդ գիւղացի մը երթայ օրիորդի մը ձեռքը խնդրելու, անկէ կստանայ ասեղնագործուած անձեռոց մը, որ ուսումական բառով Ռուլլինֆ կը կոչուի այդ նուէրը կը հաստատէ թէ իր խնդրանքը ընդունուած է: Հակառակ պարագային, երիտասարդը հետեւալ օրը ճաշի կը հրաւիրուի ու իրեն կը հրամցնեն դղումի ապուր մը, որ մերժման նշան է:

Անքեյ հեռագրի գործածութիւնը. — Նիւ Եորքէն կը հեռագրեն թէ կառավարութիւնը որոշած է քիչ ատենէն անթել հեռագիրը գործածել իւր պաշտօնական յարաբերութեանց մէջ, ինչպէս և օգտաւնական գուշակութիւնները, դիտողութիւնները Հաթթերոսէն Հենրի գլուխը հաղորդելու համար, այսինքն 127 միլ (մէկ միլը կարժէ 1609 մէդր) տարածութեան մը վրայ:

Արդէն Հաթթերոս գլուխը պէտք եղած գործիքները ունի:

Եթէ փորձերը լաւ հետեւանքներ տան եւ եթէ փորձը կատարողները գոհ մնան, կառավարութիւնը նոյն դրութիւնը պիտի հաստատէ ամբողջ Ատլանտեան ովկիանոսի բոլորտիքը, որպէս զի կարենալ լուր տալ և ստանալ ծովու մէջ հեռուն գտնուող նաւերէն:

ՀԱՐՅ—ՊԱՏԱՍԻԱՆԻ

Ժամանակիս օրիորդները ինչ տեսակ հիւանդութենէ կը տառապին:

—Փիէֆոք Տը դրամօթիսիէն:

Ինչ է կիւնը:

—Հարուստին՝ սալոնի զարդը, միշակին՝ ժապոյիֆ Տ'անճանը և աղքատին՝ աշխարհը:

Մարդուս ամենէն հաւատարիմ և ճշմարիտ բարեկամը ո՞րն է:

—Քսակը:

Արդի երիտասարդութիւնը ինչ բանի հակամետ է:

—Պեխերու արդուզարդի:

Ինչ տարբերութիւն կայ տանտիկնոջ և ըսպասուհիի մը միջև:

—Առաջինը պաշտօնապէս կ'սպասարկէ, իսկ երկրորդը ոչ պաշտօնապէս:

Ինչ տարբերութիւն կայ ժամացոյցի մը եւ կնոջ մը միջև:

—Առաջինը ժամերը կը յիշեցնէ, իսկ երկրորդը ժամերը կը մոռցնէ:

2.

ՇԱՏ ՔԻՉ ԿԸ ԳՏՆՈՒԻՆ

Շատ քիչ կը գտնուին, նոր նոր հագնող եւ զերձակին պարտք չունեցող միւսիւններ:

Աղօթելու համար միայն եկեղեցի գացող մատմաղէներ:

Եկեղեցին իբր սրբավայր նկատող միւսիւններ:

Լուացուելէն անմիջապէս ետքը կարմիր գէմք ունեցող տիկիները եւ օրիորդներ:

Ակնոց դնող և ակնոցի իրաւամբ պէտք ունեցող միւսիւններ:

Երկու օրուան համար դրամ փոխ առնող, և երկու ամիսէն առաջ վերագարձող պարտաճանաչներ:

Առանց մէկ կողմին մանքաւ կըլեցնելու, ամուսնութիւն յարմարցնող խրատողներ:

Քիչ գրելով շատ բան հասկցնող յօդուածագիրներ:

Խօսք տուած օրը զգեստը յանձնող դերձակներ:

Երկուշաբթի օրերը աշխատող կօշկակարներ:

Առանց ժայիթի քառորդ դար շարունակող վաճառականներ:

Գիշերները առանց խոկալու քնացող ախշաւճիկներ:

Մ.

Ծ Ի Ծ Ա Ղ

Հարուստ կ'ին մը կը գանգատէր թէ ամուսնէ պահած պտուղները բոլորն ալ կը փտտին:

—Մեր տունը զրկեցէք, տիկին, պատասխանեց բաղնադամ ընտանիքի մը տիկինը, մեր տղա զաքները չեն փտտեցներ:

2. քանչը՝ փեսին:

—Լուսանկարս հանել տալու դիտաւորութիւն ունիմ, ո՞ր հագուստովս հանել տամ:

Փեսան. — Ճամբորդի հագուստովդ:

Առջի օրը տարեց տիկին մը հայ նպարավաճառի մը խանութը երթալով կըսէ:

—Հարիւր տրամ խահվէ տանոցէն, կէս օխա սագօն չորսուկէսնոցէն, կէս օխա շէքէր չորսնոցէն, հարիւր տրամ սաեաղի 12նոցէն, կէս օխա բրինձ 3նոցէն. հիմա հինգ ֆրանքնոց մը տամ նէ ինծի ինչ ետ պիտի տաս:

Նպարավաճառը գրիչը ձեռք առած երկար բարակ հաշուելէ ետքը կը պատասխանէ:

—13 դրուշ 30 փարա, մարիկ:

—Շնորհակալ եմ եսվրում, ըսելով երբ կը մեկնէր, նպարավաճառը կը գոչէ:

—Հէ՛յ, ո՛ւր կ'երթաս, կեցիր որ ուղածներդ կշռեմ տէ տամ:

—Բան մը չեմ ուզեր, օղուլ, ըսածներս վարի պախալէն առի տէ, հիսապը եաղնըջ ըրած չըլլայ տէյի եկայ քեզի հարցուցի:

Կնոջ մը լեզուն մէկէն ի մէկ իջուածքէ բռնուելով, իր ամուսինը բոլոր նշանաւոր բժշկաց կը դիմէ և վերջապէս ճարտար բժիշկ մը կը յաջողի անոր դարմանը գտնել: Կնոջ լեզուն բացուելուն պէս կսկսի իր ամուսինը առական և այնչափ կը վշտացնէ զայն, որ խեղճը կը ստիպուի դարձեալ նոյն բժշկին վազել:

—Աման, տօքթօր . . .

—Ի՞նչ կայ, նորէն լեզուն բռնուեցա՞ն:

—Ախ, ո՛ւր էր, անանկ բան մը ըլլար. եթէ նորէն կ'են առաջինին պէս համր ընես՝ ո՛րչափ ստակ ուզես նէ կուտամ:

—Ատ ըսածդ անկարելի է, բայց եթէ ատոր դարմանը կուզես, միայն քու ականջներդ խուցընելէ ուրիշ ճար չկայ:

ՏԵՄԵՐԻՔ

(Աժանս Բոժոժիկ և Ընկ.)

Լոնտոն, Բարիզ, ժընէվ, Աթէնք, Պոլիս

Հնչակեան, Վերակազմեալ Հնչակեան, Արմենական, Միութենական, Մահ Դաւաճանացեան, Ազգային յեղափոխական, Հայ Սօցիալիզմական և Արնալուտո—Հայկական 8 կուսակցութիւններ խմանալով ու ինններորդը Դաշնակցականք դրամ հաւաքելու ելած են, ժողովուրդին կը գոչեն միաձայն. «Յիշեսլիք և զմեզ առաջի անմահ քէսէին ձերոյ»:

Բոժոժիկ. —Յիշեալ լիջիք առաջի կուկո՛ւկին մերոյ:

Աւիցա Սօֆիցա

Տէրտէրադրկեալ երեցկին տուտուն՝ պախըճի Թագուկին ձեռքը կէս փրանք դնելով «բախ-

լա» նետել տուաւ, հասկնալու համար թէ արդեօք տէրտէրը պիտի վերադառնար: Բախլաճին պատասխանեց. «Իրիսկին, քուրիկս, իրեք սահաթէ՛ն մի ըսեմ, իրեք օրէ՛ն մի, իրեք շաբաթէ՛ն մի, իրեք ամիսէ՛ն մի, նիհայէթ անպատճառ պիտի գալ»: Ասոր վրայ երեցկինը «տէրտէրս պիտի գայ, պախըճի Թագուկը դիտեալ» ըսելով սկսաւ տարաձայնել դուռ դրացիներուն որոնք քահրահաձայն «Աստուած շատ քաջել չտայ» կըսէին:



Գամաթքա

Հայ նպարավաճառ մը որ իրեն հետ Պօլսէն բերած գաղթական . . . հաւը կորսնցնելու դժբաղդութիւնն ունեցած էր, ի նշան սգոյ սեւ շապիկ հագաւ: Ազգականք և բարեկամք իրենց վշտակցութիւնը յայտնեցին քառթերով, նամակներով ու մինչեւ իսկ հեռագրով: Պուկար տառերով ու թուրքերէն լեզուաւ զարնուած հեռագրին բովանդակութիւնն էր.

«Հաւընդըն վէֆաթընտան քէտէրիմիզի պէյան իտէրիզ»

Տօսթլարընըզ.

Հանգուցեալ հաւը դարմանելու համար ոգի է բեռին աշխատեցան տօքթօն մը, ատամնաբոյժ մը և դեղագործ մը: Օգնական խմբագիր մըն ալ որ մահազդը խմբագրած էր, իր ձեռքովը յէօր առապասին մէջը դրաւ հաւիկը:

Հաւակորոյս նպարավաճառը քառթերուն եւ նամակներուն պատասխանեց պանիր փաթտելիք խապա քուղթերու միջոցաւ:

Աւիցա չամուռեաթա

Մայր մը մէկ երկու տանթիսթներէ իմանալով որ իր 27 տարեկան տղան նոր հանելիք ակաւայի մը պատճառաւ ցաւէն կը տանջուի, «Եկու՛ զաւակս, իլաճ մը ընեմ քի խօլայ հանես» ըսելով երկու օխա ցորենով հասիկ մը շինեց ու անոր գլխէն վար թափեց:

Թատրոն Սանդրալ

Կիրակի դիշերուան ներկայացումը առանց նուագարանի տեղի ունեցաւ: Դերասանք՝ զինուորական քայլերգը յօրինեցին բերնի «տուրտուրտուր» յով և պատերազմի նշանն ալ տրուեցաւ. «Մուխալայէ պօռուլով»:

Հրատարակուեցաւ «Այնէի Լէթայիֆի Ա. Բ. և Գ. տետրակները» 20 տետրին բաժնեգինն է Պուկարիոյ համար 2 ֆր. արտասահման շուկէս ֆր. կանխիկ:

ԱՉԴ

Բարեյիշատակ եղիազար Մուրատեանի հեղինակած «Քննական Պատմութիւն Արշակ Բ. ի և անոր Պապ որդւոյն» անուն երկասիրութիւնը այս անգամ լոյս տեսած է Աեքսանդրիոյ «Արաքս» նորահաստատ տպարանէն և կը ծախուի ի գին 2^{1/2} ֆրանք: Պուկարիոյ և Ռումանիոյ մէջ ստանալ փափագողք դիմելու են մեր խմբագրութեան:

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (11)

ՌԷՆԷ ՏԷ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ԳԱՐՄԻՐ-ՄԱՄՈՒՆԸ)

Հաս օրեր անցած էին այսպէս, երբ առտու մը որ աղախինը խոյս տալու նպատակով վայրկեանին կը սպասէր, որպէս զի ուրիշ թաղէ մը երթայ գնումները կատարել, նշմարեց որ Չուի դուռն ու պատուհանները գոց էին:

Հարցուց փնտռեց և իմացաւ թէ առջի օրը, իր գործերը կորսնցնելու զննելով, մտաւ ծանուցած էր բարեկամներուն որ բոլորովին կը հեռանար բաղաբէն:

Ոմանք կըսէին թէ Ամերիկա երթալու մտադիր էր. ուրիշներ կը կարծէին թէ, այդ գաւառէն զոտուած և բնութեամբ թափառասէր ըլլալով, պարզապէս կուգէր ուրիշ գաւառ մը հաստատուիլ:

Վարդ այսչափ միայն կըրցաւ իմանալ, և այս գահավէժ մեկնումը սոսկացուց զինքը: Սարսափ և խղճի խայթ զգալով, պահ մը մտածեց ամեն բան պատմել տիկին Լիուի, բայց կշտամբուելու երկիւղը այնքան յետաձգեց այս խոստովանանքը որ, Լիու-Սիուի ամուսնութեան համար որոշուած թուականը հասաւ, և դեռ ինք բան մը չէր կըրցած յայանել:

Մնաց որ, միայն թիւ մը հանգարտած ըլլալով, կը մտածէր թէ Չու յուսահատութենէն անձնապաշտ և զած էր, և առանց իսկ ցաւ մը զգալու անոր վրայ, այլ եւս միայն կը մտածէր գեղեցկանալ հանդէսին համար:

Այն օրն ուր Սու-Պրոտէ գահաւորակ նստաւ՝ ամուսնին տունն երթալու համար, արդէն երկար առանց ի վեր Ֆուլ-Սիի մէջ չէին մտածեր Պաթէօն-տ'Օն փողոցին մտաւառութիւն վրայ:

Անկից իբրեւ յիշատակ կը մնար խոշոր կարմիր—Մամուկ մը միայն, զոր թաղին ստամբակները գծած էին խանութին փեղկերուն վրայ, այլանդակ ուրուանկար որ շատ անգամ կը սարսաղացնէր Մէ-Բուին, թէեւ անձրեւը գրեթէ ջնջած ըլլար լայն:

Թ.

Տանջանք

Դահլիճին մեկնումէն յետոյ—կը յիշուի թէ մինչև բանին դուռն անոր ընկերացած էր—երբ Սու-Պրո-

րոտէ լսեց ծանր նիգերուն բաշտելը այն դրան որ այնուհետեւ զինքը կը բաժնէր կենդանի արարածներէ, մանկամարդ աղջիկը կոշտ փսիւթի մը վրայ կձկուեցաւ, ուր ժամերով մնաց անշարժ, առանց կարենալու միտքն ամփոփել, վախնալով որ խելքը կը կորսնցունէ:

Յետոյ, իր առաջին խելայեղումը բիշ քիշ հանգարտած ըլլալով, հասկցաւ իր վիճակը և սիրտը թուաւ դէպ ի մայրը, որ շատ չանցած պիտի իմանար թէ այն փոքր երջանիկ ընկել ուզեց, իր սիրեցեալ աղջիկը ամբաստանուած էր սոսկալի ոճիրով մը:

Այն ատեն յիշեց իր մանկութիւնը՝ խնամքով ու սիրով շրջապատուած, Պաթէօն-տ'Օն փողոցի իր կուսական փոքր սենեակը, Վարդը, իր սիրեցեալ ծաղիկները, իր ամենօրեայ միամիտ ու բաղքը դադողմները, խելճ ի-թէն, զոր ուստիկանութեան վերատեսուչը կը համարձակէր ամբաստանել, և այս ամեն բաներն յիշելով, արցունքներ առատօրէն վազեցին աչքերէն:

Գալով այն արիւնոտ գէպին, որ այնքան խորին գաղտնիքով շրջապատուած էր, դեռ չէր ուզեր հաւատալ անոր հնարաւորութեանը, և աչքերը կը գոցէր, խնդրելով Պուտտաէն որ զինքն աղատէ այս անագորոյն միջաւանը:

Բայց, նորէն բանալով աչքերը, ակնարկը կանգ կառնէր իր բանտին պատերուն վրայ և ա՛յ չէր կրնար տարակուսիլ իր գժբախտութեան վրայ:

Գիշերը շուտով վրայ հասաւ և անոր հետ նոր շարք մը սոկուտներու որք: Մինչև այն ատեն կրած սոկուտներէն տարբեր ըլլալով հանդերձ, որ նուազ ցաւագին ու ահաբեկիչ եղան:

Առանձին էր այդ անուանարկիչ տեղը, ամենքէն լքուած, գուցէ այն սոսկալի մարդուն իշխանութեանը տակ որուն մահաստուեր յիշատակը չէր կրնար վանել իր միտքէն:

Իր խուցին նեղ լուսամուտը բանի մը զոզոթ ճառագայթ ներս կը սպրդեցունէր բանտը լուսաւորող լապտերներէն, ու թէև անօթութենէ կը մեռնէր, չէր համարձակեր շարժիլ՝ հասնելու համար բրինձէ պաքսիմադին և ջուրի սափորին զորս կը յիշէր ահաւ ըլլալ անկիւն մը, երբ իր տխուր բնակարանն էր մտած:

Կը թուէր իրեն թէ ձեռքը մսութիւն մէջ երկնցունելով, պիտի դնէր այն գարշելի միջատներուն վրայ որոց մատնուն հետքը կը կրէր պատը և որոց սողալը կը կարծէր զգալ իր շուրջը:

Տանջուածներուն կոծերը միշտ իր ականջին կը հասնէին կարծես ապացուցանելու համար թէ այդ գարշելի տեղին մէջ ցաւն անդադրում էր:

Գիշերն անցուց և ի՞նչ գիշեր՝ այդ ահաբեկու-
թիւններուն մէջ, և յոյսը ծագելուն, եթէ հայելիի մը
առջեւ տանէին զայն, ինքզինքն իսկ չպիտի կրնար
ճանչնալ:

Իր թափթփած մազերը ցանցիր կ'իյնային ուսերուն
վրայ զոր կը ծածկէր, փոխանակ հարսանեկան շքեղ
պարեգօտին՝ մութգոյն կերպասէ վերարկու մը:

Արտասուելէ յոգնած իր գեղեցիկ արտեւանունը-
ները կարմրած եւ ուռած էին, այտերը տփգոյն և ար-
դէն փոսացած, եւ իր փոքր ոտքերը ծածկող վարդա-
գոյն սնդուսէ կօշիկները ցեխով և արիւնով ծածկուած
էին:

Առտուն ժամը ինչին մօտ, ծանր ոտնաձայն մը
լսեց որ իր բանտին մօտ կանգ կ'առնէր. նիգերը ծնւե-
ցին, գուռը բացուեցաւ՝ և աղջիկը վերսկսաւ դողդալ,
կարծելով որ նորէն առջի օրուն հրէշային մարդը պի-
տի տեսնէ:

Բարեբախտաբար այնպէս չէր:

Իր խուցը մտնող անձը տարէց կին մըն էր, վտիտ
կերպարանքով, այլ անուշ ու տխուր դէմքով:

Իր ցաւատ աչքերը բանտարկելուհիին վրայ յա-
ռած էր եւ ակնարկովը կարծես կը հարցափորձիր զայն:

Սուրբորոտէ յանկարծ ապահովեցաւ եւ անոր կար-
կանց ձեռքերը, նուաղուն ձայնով մը մըմնջելով.

— Անթի՛մ, կը մօ՛մ:

Պառաւ կինը աշխուժով անոր մօտեցաւ, ծածկեց
զայն այն բուրդէ վերմակներէն մէկովը որոցմով կը
բաղկանար անոր խշտեակը, եւ յետոյ բրինձէ պաքսի-
մադի կտոր մը տալով անոր, շարժումովը հրաւիրեց զայն
բիշ մը ուտել:

Տարաբախտ աղջիկը մեքենաբար հնազանդեցաւ:
Ծարմին տրուած այս առաջին դոհացումէն յետոյ, իր
շուրթերուն վրայ հաղարուսէկ հարցումներ իրարու յա-
ջորդեցին:

Կուղեր գիտնալ թէ իր մայրն իմացած էր, թէ իր
դատաւորները շուտով պիտի հարցափորձէին ղինքը,
թէ երկար ատեն պիտի ֆաթայի մութ խուցին մէջ,
ուր ջուրը կը ծորէր պատերուն երկայնքը, ուր թաց հո-
ղը գարշահոտ տեղով մըն էր լոկ, ուր վախը անշուշտ
չատ չանցած պիտի խեղդեցունէր ղինքը:

Բայց օտարական կինը չէր պատասխաններ, թէ եւ
իր գիմազներ ամենաբուռն կարեկցութիւն յայտնէին:

— Օ՛հ, բա՛ւ մը, խնդրեմ, բա՛ւ մը, ի՞նչ կուզեն
ընել զիս, պաղատեցաւ Լիւս-Սիւս որ այս լուսութենէն
կահարեկէր:

Կինը գլխովը նշան ըրաւ թէ չի կրնար խօսիլ:

— Ինչո՞ւ: Կը վախնա՞ք:

— Ոչ, ոչ, ըսաւ պահապանուհին շարժումով:

Եւ ձեռքը շուրթերուն տանելով, ուզեց հասկցու-
նել ղինք հարցափորձողին թէ խօսելու կարողութենէն
զրկուած էր:

Տիկին Լիւսի աղջիկը գլուխը ծռեց: Հրաժարելու
էր այն յոյսէն զոր իր վերաւոր սիրտը պահ մը ունե-
ցած էր:

Սակայն և այնպէս իր եւ բանտապանուհիին միջեւ
շուտով հաստատուեցաւ գաղափարներու փոխանակում
մը: Սուրբորոտէ անոր տուաւ իր երկու մատնիկները,
խնդրելով որ ծախէ եւ երկու երեք մաքուր և հաստ
փսխաթ առնէ իրեն որոց վրայ կ'արենայ պառկիլ, յե-
տոյ գուլպաներ, և բանտին մէջ տրուած սնունդէն սար-
բեր ուտելիք մը:

Համար կինը խոստացաւ անյապաղ գոհացունել իր
բոլոր փափաքները: Բայց երբ ըսաւ որ իր վրայօք լուր
տանի մօրը, անկա մերժեց սոսկումի անանկ արտայայ-
տութեամբ մը որ մանկամարդ կինը չը համարձակեցաւ
պնդել, մտածելով արդէն թէ անկարելի էր որ տիկին
Լիւս չգիտնայ իր ինչ եղած ըլլալը:

Կամ ոստիկանութիւնը անոր տունը գացած էր ի
Ֆրանսիոյ, եւ անկա արդէն իմացած էր ամեն բան.
կամ իր հարսնիքին յաջորդ օրը չընդունելով փեսին սո-
վորական այցը, Լէնկի ամարանցը գացած եւ ամեն բան
իմացած էր հոն:

Ուստի շատ չանցած պիտի գար:

Այո մտածում բիշ մը բաշտութիւն տուաւ մանկա-
մարդ աղջկան. բայց երբ երեք օրեր անցան եւ բնաւ
լուր չառաւ գուրտէն, ամենախորին յուսահատութեան
մէջ ինկաւ դարձեալ:

Գրեթէ բոնութեամբ բիշ մը ուտելիք կը կերցու-
նէր իրեն ընկերուհին, բայց Սուրբորոտէ ա՛լ խօսք չէր
աւղղեր անոր:

(Շարունակելի)

Ի. Գ. Հ Ի Ն Տ Լ Ե Ա Ն

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պոլկարեւել լեզուի

Գին 1 ֆր.

Դիմել Հայելիի խմբադրութեան:

Печатница „Взаимность“ — Варна